

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ա. Ծառայության անվանումը

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում (ք. Հրազդան) առկա պահեստային տարածքի արդիականացման հիման վրա վտանգավոր քիմիական թափոնների ազգային պահեստավորման և կառավարման տարածքի վերակառուցման շինարարական աշխատանքների նախագծում, գործառնական պլանավորում, անհրաժեշտ համաձայնությունների/հաստատումների ապահովում:

Բ. Ծրագրի անվանումը

Սույն հանձնարարության առարկան ՄԱԶԾ/ԳԷՀ «ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ) աղտոտված տարածքների աղտազերծում՝ անվտանգ քիմիկատների կառավարման շրջանակներում» լայնածավալ Ծրագրի ենթաբաղադրիչն է, որը ձեռնարկվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) և ՀՀ Բնապահպանության նախարարության (ԲՆ) հետ համատեղ:

Գ. Հանձնարարության ընդհանուր նկարագրությունը, նախապատմությունը և համատեքստը

Սույն խորհրդատվական առաջադրանքը վերաբերում է նախագծային փաստաթղթերի, մրցութային մասնագրերի, իրականացման ընթացակարգերի, վերապատրաստման, բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատման, ինչպես նաև նախագծերի և բնապահպանական համաձայնությունների/հաստատումների տրամադրմանը, որոնք պահանջվում են նախկին բուժմիջոցների/պաշտպանության պահեստի շինության վերակառուցման, արդիականացման և հիմնանորոգման աշխատանքների համար՝ օգտագործելու այն որպես քիմիական վտանգավոր թափոնների (ՎԹ) կառավարման ներպետական օբյեկտ, որը կծառայի որպես ապահով պահեստավորման և արտահանման (ոչնչացման նպատակով) կառույց և հնարավոր ընդունող տարածք՝ վտանգավոր թափոնների վտանգազերծման և կառավարմանն առնչվող այլ խնդիրների համար:

Ներածական տեղեկատվություն

Ինչպես նշվեց վերը, ընդհանուր Ծրագիրը, որի մասն է կազմում սույն հանձնարարությունը, կոչվում է «ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ) աղտոտված տարածքների աղտազերծում՝ քիմիկատների անվտանգ կառավարման շրջանակներում»: Սա Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից համաֆինանսավորվող ծրագիր է, որն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակի կողմից՝ որպես ԳԷՀ-ի իրականացնող գործակալություն: Ծրագիրը հաստատվել է ԳԷՀ-ի կողմից, և պաշտոնապես համաձայնեցվել ՄԱԶԾ-ի և ՀՀ կառավարության միջև, ինչը փաստված է «Ծրագրային փաստաթղթում» (ԾՓ)¹:

Ծրագիրը կազմված է երեք հիմնական գործառնական բաղադրիչներից և մոնիթորինգի/գնահատման և ծրագրի ղեկավարման վերաբերյալ տիպային (ստանդարտ) դրույթներից: Ծրագրի ընդհանուր կառուցվածքը՝ բաղադրիչների, արդյունքների և ենթարդյունքների

¹ <http://goo.gl/c0mPH8>

առումով, ներկայացված է Հավելված 1. 1-ում: Ծրագրի հիմնական թիրախները, ինչպես լուսաբանված է 1-ին և 2-րդ բաղադրիչներում և դրանցից յուրաքանչյուրի ներքո ներառված տարբեր արդյունքներում, հետևյալներն են. ա) Երևանի Նուբարաշեն արվարձանում գտնվող խորհրդային ժամանակաշրջանից մնացած ԿՕԱ-ների և այլ ժամկետանց պեստիցիդների (ԺՊ) պաշարների խոշոր գերեզմանոցի վերացումը (1-ին բաղադրիչ), բ) որպես նախորդի մաս՝ առնչվող վտանգավոր թափոնների կառավարման կարողությունների և հնարավորությունների զարգացումը, գ) բարձր կոնցենտրացիայի ԿՕԱ-ների պաշարների արտահանումը ոչնչացման նպատակով, դ) բարձր և համեմատաբար ցածր աղտոտվածություն ունեցող հողերի մաքրումը/պարփակումը Հայաստանում (Բաղադրիչ 2):

Սույն առաջադրանքը գտնվում է ծրագրի 1-ին բաղադրիչի 1.2 արդյունքի ներքո, որը ներառում է քիմիական վտանգավոր թափոնների կառավարման Կոտայքի ազգային կենտրոնի/կայանի հիմնում, որը կծառայի որպես ապահով միջանկյալ պահոց Նուբարաշենից և այլ տեղամասերից հեռացված բարձր կոնցենտրացիայի ԿՕԱ պեստիցիդների և ԿՕԱ-ներով աղտոտված հողի համար՝ նախքան բնապահպանորեն անվտանգ եղանակով ոչնչացման նպատակով արտահանումը, ինչպես նաև հիմնական ենթակառուցվածքի ապահովումը, որը թույլ կտա Հայաստանում ներդնել ՎԹ-ների աղտագերծման, հողերի վերականգնման տեխնոլոգիաներ, որոնք կկառուցվեն և կշահագործվեն ԿՕԱ-ներ պարունակող պեստիցիդների և առնչվող աղտոտված նյութերի աղտագերծման նպատակով: Ծրագրի ընդհանուր նպատակներից մեկն այն է, որ Կոտայքի տարածքը կկազմի այն հիմնական ենթակառուցվածքը, որը Հայաստանի համար կապահովի քիմիական վտանգավոր թափոնների կառավարման արդիական՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան հնարավորություններ:

Տարածքը գտնվում է Կոտայքի մարզում՝ հյուսիս-արևելք – հարավ-արևմուտք Մ4 մայրուղուն հարակից վայրում, Հրազդան քաղաքից դեպի արևելք: Սա նախկինում եղել է բուժմիջոցների/պաշտպանական լոգիստիկ և փոխադրման բազա: Օբյեկտը լիովին ապահովված է եղել կոմունալ ծառայություններով, սակայն դրանք այժմ մեծ մասամբ խաթարված են, թեև բոլոր ծառայություններին միացման կետերը տեղակայված են տարածքի սահմաններում կամ մերձակայքում: Օբյեկտը պարունակում է չօգտագործման հետևանքով վատ պայմաններում գտնվող մի շարք կառույցներ, որոնք ծրագրի նախապատրաստական փուլում հարմար են դիտվել որպես պահեստավայր արդիականացվելու համար, ինչպես նաև այլ շինություններ, որոնք պիտանի են համարվել օժանդակ ծառայությունների տեղակայման համար: Տարածքը գտնվում է ամենամոտ բնակավայրից կամ այլ կառուցապատված տարածքներից կամ ջրային մարմիններից մոտ 2 կմ հեռավորությամբ վրա, հանրապետական ցանկացած սանիտարական պահպանման արգելված գոտիներից դուրս, և ըստ նախնական դիտարկման համապատասխանում է նման օբյեկտների համար ընդունված ազգային և միջազգային չափանիշներին: Ծրագրի նախապատրաստման փուլում (ԾՆՓ) կատարվել են հայեցակարգային նախագծային աշխատանքներ, որոնք գլխավորապես վերաբերում են հիմնական կառույցի վերազինմանը որպես ժամկետանց պեստիցիդների պահեստավայր: Սա ներառվել է ԾՆՓ խորհրդատուի հաշվետվության փաթեթի մեջ (հայերեն)² և ամփոփվել անգլերեն լեզվով բացատրագրում և նախահաշվային աղյուսակաթերթերում: Նշված փաստաթղթերը և հիմնավորող գծագրերը առկա են որպես հղումային նյութ սույն առաջադրանքի համար և որոշ մասերը կարող են տրամադրվել կողմնորոշիչ սեմինարի ժամանակ: Ստորև ներկայացվում է տարածքի ամփոփ նկարագրությունն (նկարների հետ միասին)՝ ըստ ՄԱԶԾ ծրագրի թիմի վերջերս կատարած զննության արդյունքների:

² «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում գտնվող պահեստավայրի ձևափոխումը ներպետական վտանգավոր թափոնների (ՎԹ) միջանկյալ պահեստավորման տարածքի» հայեցակարգային նախագծի և ծախսերի գնահատման հաշվետվություն»՝ ՄԱԶԾ/ԳԷՀ «Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ) աղտոտված տարածքների աղտագերծում»՝ անվտանգ քիմիկատների կառավարման շրջանակներում» լիաժամկետ ծրագրի նախապատրաստման փուլում», Ա. Մանուկյան, 2013:

- Տարածքը կազմում է մոտ 17 հա մակերես՝ որոշ հատվածներում ցանկապատի պահպանմամբ, որը զբաղեցնում է բարձրադիր վայրի հատված Մ4 մայրուղու արևելյան կողմում՝ Հրազդան քաղաքից մոտավորապես 4 կմ դեպի արևելք և ուղղակի ճանապարհով կապ ունի մայրուղու հետ: Տարածքը որոշ ժամանակ չի գործել, սակայն սկզբնապես կառուցվել է որպես բուժմիջոցների պահեստ: Հասկանալի է, որ չունի վտանգավոր նյութեր կամ զինամթերք պարունակած լինելու պատմություն (թերևս բացի վառելիանյութերից), թեև սա



ֆորմալ կերպով չի փաստաթղթավորվել կամ գնահատվել կազմակերպված հետազոտությամբ և գնահատմամբ:

Ստորև տրամադրված են տարածքի՝ Google Earth-ի լուսանկարած մի քանի ընդհանուր տեսարաններ (2016թ.):

Դրանք համապատասխանում են տարածքի ներկա վիճակին և հատակագծին:

- Տարածքում կան վեց հիմնական շենքեր, որոնցից մեկը գրասենյակային երկհարկ շենք է, երկուսը՝ միհարկանի խարխուլված կառույցներ են, և առկա են երեք պահեստի շենքեր: Երկու համեմատաբար փոքր պահեստի շենքերը հավանաբար օգտագործվել են փոխադրամիջոցների և սարքավորումների պահեստավորման նպատակով, իսկ ամենաընդարձակ և ամենից անվնաս շենքը ծառայել է որպես նյութերի և (կամ) պաշարների պահեստ: Բացի նշված շենքերից, կան հինգ այլ կառույցներ, որոնք հավանաբար եղել են դարպասներ՝ փակ շինություններ, հիմնական պահեստի մեկ օժանդակ շինություն, և տարբեր պիտույքների պահման կառույցներ: Առկա են նաև մի քանի ջրավազանների մնացորդներ, ինչպես նաև զգալի չափերի ստորերկրյա մի բունկեր:
- Տարածքը սպասարկում է երբեմնի լայն, շահագործման ծանր պայմանների համար նախատեսված պարագծային ճանապարհ, որը գլխավոր մայրուղուց անցնում է տարածքի արևմտյան սահմանի երկայնքով և շրջանցում է հարավային սահմանը՝ երկու փոքր պահեստային շենքերի և գլխավոր պահեստի երկու կողմերում՝ մուտքի դարպասներին մոտ գտնվող կառույցների հետևում: Այս ճանապարհը կապում է գլխավոր պահեստի հյուսիսային մասում գտնվող մի ասֆալտապատ հարթակի հետ, որտեղ տեղակայված են բեռնման գլխավոր հարթակը և մուտքի դռները: Այս ճանապարհներն անցանելի են, թեպետ ընդհանրապես վատ վիճակում են:



- Ամենից մեծ հետաքրքրության առարկա է ամենաընդարձակ՝ հիմնական պահեստը, որի չափերն են՝ 60մ x 18մ: Դա հավաքովի երկաթ-բետոնե շինություն է թիթեյա ծածկով փայտամած տանիքով, որը կենտրոնի երկայնքով գլխավերևում ողջամիտ տարածություն է ապահովում, սակայն պատերի մոտ ավելի ցածր է (նկարները՝ ստորև): Առկա են յոթ դռների բացվածքներ, որոնք տանում

Նկ. 1

են դեպի պահեստի դիմացի բեռնման հարթակը, ինչպես նաև 10-ական լուսամուտների բացվածքներ՝ կողմնապատերի վրա: Կառույցի արևմտյան ծայրում կա նաև շրջանակով խոշոր դռան բացվածք: Հատակը հիմնականում անվնաս է, կառուցված է մոնոլիտ երկաթբետոնից: Կրողունակության վերաբերյալ տեղեկություններ չկան:

- Ինչ վերաբերում է տեխնիկական վիճակին, հիմնական կառույցը՝ մեծ պահեստի շինությունը (վերը նկարում՝ «Հիմնական պահեստ») ինքնին ամբողջ անվնաս է ու կայուն, ներառյալ տանիքը, որը կարծես ինչ-որ չափով նորոգվել է (ի տարբերություն մյուս շինությունների), ինչի մասին վկայում են խոնավության թափանցման նշանների և ակներև անցքերի բացակայությունը: Դռների ու պատուհանների բացվածքները ընդհանուր առմամբ վատ վիճակում են, սակայն հեշտությամբ նորոգելի են՝ կամ փակելով, կամ ընդարձակելով՝ հարկ եղած դեպքում նոր դռներ/լուսամուտներ տեղադրելով: Կնախատեսվեն համարժեք հատվածներ ակտիվ և (կամ) պասիվ օդափոխության և այլնի համար: Երկաթբետոնե հատակը ընդհանուր առմամբ ամբողջական է, սակայն նորոգման կարիք ունեն: Նույն կերպ, հարկ կլինի գնահատել հիմքում գտնվող նեցուկների (հենարանների) վիճակը և իրական տանողունակությունը: Բեռնման տախտակամածը ընդհանուր առմամբ շատ քայքայված է և կպահանջի էական նորոգում:



Նկ. 2. Հիմնական պահեստի շինություն

Հիմնական պահեստի շինությունը ներսից



Ներքին տեսքը դեպի արևմուտք



Ներքին տեսքը դեպի արևելք



Տանիքի հեներանը և բետոնե հատակը

- Հնարավոր հետաքրքրություն ներկայացնող մյուս շենքերն են՝ հիմնական պահեստային շենքից արևմտյան կողմում գտնվող փոքր սպասարկող շենքը (նախկինում հանդերձարան) և երկու համեմատաբար փոքր, բայց կարևոր պահեստների շենքերը հիմնական պահեստից դեպի արևմուտք (նկարները՝ ստորև): Սպասարկող շենքը, որը կարող է ծառայել որպես աշխատակազմի օգտագործման օժանդակ շինություն, տանիքի առումով բարվոք վիճակում է, թեպետ պատուհանները և դռները չկան:

Երկու համեմատաբար փոքր պահեստների շենքերը լավ հզորություն են որպես թափոնների և սարքավորումների լրացուցիչ պահեստներ կամ հավանական օժանդակ կառույցներ աղտազերծման հնարավոր գործողությունների համար: Երկուսի տանիքներն էլ պահանջում են նորոգում: Հիմնական պահեստի շենքից դեպի արևմուտք տեղակայված երկրորդ փոքր պահեստային շենքի վիճակը ավելի բարվոք է և այդ շինությունը կոիտարկվի գնահատման, նորոգման ու հետագա օգտագործման նպատակով:



Նկ. 3. Փոքր պահեստներ (արտաքին և ներքին տեսք)



- Տարածքի ցամաքուրդը (դրենաժ) կարծես կատարվում է բնական եզրագծերով. ամբողջ հոսքն անցնում է տարածքի հյուսիսային և արևելյան կողմերով, կանգնած ջրի միակ զանգվածը տեսանելի է հյուսիս-արևմտյան անկյունում: Այդուհանդերձ, տարածքի հարավային և արևմտյան հատվածքների մեծ մասում առկա է համեմատաբար բարձր, հարթ տարածքի մի զգալի մակերես, որին կարելի է թեքություն տալ՝ ապահովելու անձրևաջրերի հեռացումը, և որը կարող է ծառայել որպես կոնտեյներային հրապարակ:



Նկ. 4. Սույն հանձնարարության շրջանակում գնահատվող և նախագծվող տեղանքն ու շինություններն են.

1. Մեծ պահեստային շինություն՝ 60մ x 18մ
2. Նախկին հանդերձարան՝ աշխատակազմի օգտագործման օժանդակ շինություն 9մ x 6մ
3. Փոքր պահեստային շինություն՝ 36մ x 12մ
4. Նախկինում՝ տրիանսֆորմատորային կայան
5. Պահակակետ
6. Անձրևաջրերի կուտակման հոր և պոպմպակայան
7. Նախատեսվող ասեպտիկ հոր
8. Տարածք/տեղանք
9. Ժամանակավոր պահեստավորման ծածկ / կառույց (24մx12մx5մ): Տեղը կորոշվի:

Տարածքի և կառույցների սեփականության իրավունքը ՀՀ կառավարությունից փոխանցվել է ՀՀ ԱԻՆ-ին, որն այս առաջադրանքի համար հիմնական շահառուն, պատվիրատուն և գործընկերն է, և ԳԷՀ-ի հետ հետ կլինի համաֆինանսավորող կողմ: Ենթադրվում է, որ ՀՀ ԱԻՆ-ը նաև կլինի օբյեկտի վերջնական կառավարողն ու շահագործողը և կգործի տարածքի վերակառուցման ծրագրի նախաձեռնողի դերում սույն հանձնարարության և նախագծի ազգային մակարդակով հաստատման նպատակներով նկատի ունենալով, որ պահեստային տարածքի և շինությունների արդիականացման հիման վրա վտանգավոր քիմիական թափոնների ազգային պահեստավորման և կառավարման տարածքի վերակառուցման շինարարական աշխատանքների արդյունքը պետք է բավարարի այդ գործունեության համար պահանջվող ՀՀ լիցենզավորման պահանջներին: Սույն հանձնարարությունը ստանձնող խորհրդատուն հեղինակային հսկողության իրականացման պատասխանատվություն կվերցնի ազգային իրավական ակտերի և շինարարական նորմերի պահանջների համաձայն:

Դ. Հանձնարարության նպատակը

Հանձնարարության ընդհանուր նպատակն է գնահատել և տրամադրել մանրամասն տեխնիկական առաջարկ և նախահաշիվ պահեստային տարածքի և շինությունների ընդհանուր ենթակառուցվածքների արդիականացման աշխատանքների համար, ներառյալ մուտքի, կոմունալ ծառայությունների, քիմիական վտանգավոր թափոնների ապահով՝ ազգային և միջազգային չափորոշիչներին համապատասխանող պահեստավորման և աղտազերծման շենքային/տարածքի հնարավորությունները, որպեսզի դրանք բավարարեն քիմիական վտանգավոր թափոնների կառավարման ազգային օբյեկտ ծառայելու պայմաններին, ինչպես սահմանված է ՄԱԶԾ/ԳԷՀ «Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ) աղտոտված տարածքների աղտազերծում՝ անվտանգ քիմիկատների կառավարման շրջանակներում» ծրագրի Ծրագրային փաստաթղթում: Սա ներառում է առաջարկվող գործողություններին առնչվող համապատասխան բնապահպանական գնահատում և շրջակա միջավայրի վրա ազդեցության մեղմացման միջոցառումների ապահովում, օժանդակություն գործառնական ընթացակարգերին ու պլաններին, օրենքով պահանջվող թույլտվություններին և հաստատումներին, ինչպես նաև շահագործող անձնակազմի վերապատրաստում, շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ հեղինակային հսկողության իրականացում:

Ե. Աշխատանքների ծավալը (ընդգրկումը)

Պահեստի տարածքի կառուցապատման ընդհանուր նախագծային շրջանակը պետք է համապատասխանի ծրագրային փաստաթղթում սահմանված նպատակին և գործառնություններին (Ծրագրի փաստաթղթից համապատասխան ամփոփ քաղվածքը կցված է սույն փաստաթղթին): Այդ գործառնությունները բնորոշվում են որպես կառուցման երեք հիմնական մակարդակներ, որոնք բավարարում են ԳԷՀ-ի ծրագրի մոտակա և միջնաժամկետ պահանջները, ինչպես նաև ծրագրի ավելի երկարաժամկետ ազգային զարգացման նպատակը, որը հիմք է ապահովում քիմիական վտանգավոր թափոնների կառավարման ազգային օբյեկտի/կառույցի համար: Սահմանվում է նաև այն պահանջը, որ վերակառուցումը պետք է կատարվի ազգային և միջազգային չափորոշիչների պահանջների համաձայն: Հավելված 1. 2-ում տրված է միջազգային ստանդարտների և ազգային ստանդարտների օրինակների ցանկերը՝ նշելով, որ համապատասխանության հիմնական ուղեցույցներն են «Բազելի կոնվենցիայի ուղեցույցները» և ԳԷՀ-ի Գիտական և տեխնիկական հարցերով խորհրդատվական խմբի (STAP) ուղեցույցները: Հավելված 1. 3-ում բերված է կիրառելի ազգային համապատասխան նորմերի, ստանդարտների և կանոնակարգերի ցանկը:

Վերոնշյալին համահունչ կերպով, կառուցման պահանջվող ընթացքը կարող է բնորոշվել երեք փուլերով, որոնք պետք է մշակվեն և համապատասխան ձևով արտացոլվեն նախագծման, գործառնական պլանավորման և թույլտվությունների/հաստատումների ստացման գործընթացներով: Դրանք են՝ 1) անվտանգ միջանկյալ պահեստավորման ապահովում բարձր կոնցենտրացիայի ԿՕԱ պեստիցիդների և ԿՕԱ-ներ պարունակող թափոնների մնացորդների համար, որոնք ոչնչացման նպատակով այնուհետև կտեղափոխվեն արտերկիր, նկատի ունենալով, որ այդ քանակները և փաթեթավորման հավանական կազմաձևումները (կոնֆիգուրացիաները) կճշտվեն Նուբարաշենի տարածքում³ առաջիկայում կատարվելիք գնահատման / գործառնական պլանավորման աշխատանքների ընթացքում, 2) հիմնական օժանդակ ենթակառուցվածքների ապահովում, որոնք պահանջվում են ԿՕԱ-ներով և այլ աղտոտիչներով աղտոտված թափոնների (ըստ ամիրաժեշտության՝ ներառյալ աղտոտված հողի ընդունումը) տեղում աղտազերծելու համար: Սույն Ծրագրի շրջանակներում այս ենթակառուցվածքը կծառայի Նուբարաշենի տարածքից հեռացվող մոտավորապես 7,000 տ աղտոտված հողի ընդունման և աղտազերծման համար՝ ըստ հաստատված անհրաժեշտության (աղտազերծման տարբերակը կորոշվի նախապես՝ ցուցադրական քայլի միջոցով), 3) վտանգավոր թափոնների պահեստավորման/փոխանցման ներպետական մշտական կայանի գործարկում, որտեղ կպահեստավորվեն և կփոխանցվեն այլ առաջնահերթ վտանգավոր քիմիական թափոնների խմբաքանակներ (օր., ՊՔԲ-երի, ժամկետանց պեստիցիդների, աղտոտված տարածքների մաքրման մնացորդների)՝ ունենալով հիմնական օժանդակ ենթակառուցվածքներ՝ տեղակայելու աղտազերծման փոխադրելի կամ անշարժ հնարավորություններ, ինչպես որ դա կհիմնավորվի ապագայում:

Սույն աշխատանքը ձեռնարկելիս նկատի է առնվել, որ այս առաջադրանքի ներքո նախագծվող կառուցման բուն աշխատանքները կարող են իրականացվել փուլերով՝ ընդունելով, որ դա վերջին հաշվով կախված կլինի բավարար ֆինանսավորման առկայությունից՝ ԳԷՀ-ի որոշակի պայմաններով հանձնառած միջոցներից բացի: Սա մասնավորապես վերաբերում է ՀՀ կառավարության կողմից ողջ ծրագրի համար ներկայումս կազմակերպվող համաֆինանսավորմանը: Ինչպես ակնկալվում է և ինչը պարզ կդառնա ՀՀ կառավարության՝ համաֆինանսավորման ապահովման ընթացքից և զուգահեռաբար իրականացվող Նուբարաշենի տարածքի նախագծման աշխատանքներից, սա կարող է ազդել Նուբարաշենում ձեռնարկվող շինարարական աշխատանքների՝ 1) շրջանակների և

³ Ն ու Լ ք ա ր ա շ Ե ն ի Զ Ն Ա / Տ Ա փ ա ս տ ա թ ղ թ Ե ր ը Կ ար Ե Լ ի Ե ձ Ե ք Ե ր Ե Լ Մ Ա 2 Ծ -ի Ծ ր ա գ ր ի ղ Ե Կ ավ ար մ ա ն գ ր ա ս Ե Ն յ ա Կ ի ց (Ծ 7 Գ), որ ը ն ա և Կ հ ա մ ա Կ ար գ ի Կ ա ր ը ա շ խ ա տ ա ն ք ն Ե ր ի ձ Ե ք ն ար Կ մ ա ն հ ա մ ար ը ն տ ր վ ա ծ խ ր ի ր դ ա տ վ ա Կ ա ն թ ի մ ի հ Ե տ:

ծավալների, 2) ԿՕԱ-ներով աղտոտված հողի աղտազերծման համար առկա ֆինանսավորման վրա, և դրա արդյունքում՝ 3) Կոտայքի կառույցի համար պահանջվող պահեստավորման և հնարավոր աղտազերծման կարողությունների վրա:

Այդուհանդերձ, ՊԷՀ-ի ամբողջական Ծրագրի իրականացմանը պատրաստ լինելու համար՝ ինչպես որ հաստատվել է ՊԷՀ-ի և ՀՀ կառավարության կողմից, սույն հանձնարարության այս փաստաթղթով սահմանված շրջանակը կներառի ծրագրի պահանջների ամբողջ շարքը՝ նախագծման, գործառնական պլանավորման և հավանությունների/հաստատումների ստացման նպատակով, այնպես, որ տեխնիկական մասնագրերի մշակումը և ծախսերի գնահատումը ապահովի վերը նշված երեք փուլերը: Սակայն դա պետք է նաև ներառի կառուցման հաջորդական/փուլային պլան, որը կարելի լինի համապատասխանեցնել ծրագրի էվոլյուցիային, ինչպես նաև առավել երկարաժամկետ ազգային պահանջներին, և ընդգրկել բավարար ձկունություն՝ փոփոխություններ կատարելու հնարավոր փուլավորված և կրճատված ծավալով կառուցման համար:

Հանձնարարությունը կստանձնի ընտրված ազգային կամ միջազգային Խորհրդատու կապալառու կազմակերպությունը (Խորհրդատու)՝ որը փորձառու է քաղաքացիական շինարարության, արդյունաբերական (ցանկալի է՝ քիմիական նյութերի պահպանման բաղադրիչով օբյեկտի նախագծում) օբյեկտների կառուցման, շենքերի նախագծման/տեխնիկական ծառայությունների տրամադրման, ինչպես նաև բնապահպանական գնահատումների և թույլտվությունների/հաստատումների ստացման բնագավառում: Խորհրդատուն կամ պետք է ունենա վտանգավոր քիմիական թափոնների կառավարման և դրան առնչվող հաստատությունների հետ գործ ունենալու միջազգային փորձ/մասնակցություն և/կամ միջազգային (այս առաջադրանքի պահանջները բավարարող փորձ) կազմակերպության կամ մասնագետի հետ համագործակցության հիման վրա ապահովի վտանգավոր քիմիական թափոնների կառավարման օբյեկտի նախագծման, շահագործման ու տարածքի կառուցապատման համապատասխան միջազգային փորձառություն՝ թափոնների անվտանգ պահեստավորման և աղտազերծման համար: **Այսպիսով, Խորհրդատուն համապատասխանաբար պետք է ապահովի վտանգավոր թափոնների պահպանման և աղտազերծման սույն առաջադրանքին առնչվող վտանգավոր թափոնների կառավարման կառույցի և տարածքի զարգացման նախագծման և շահագործման միջազգային փորձագիտություն/փորձ:**

Հանձնարարության վերոնշյալ նպատակին և համատեքստային տեղեկություններին համահունչ, Խորհրդատուի կողմից ձեռնարկվող աշխատանքների ծավալը նկարագրված է հետևյալ առաջադրանքների բնութագրումներում և փաստաթղթավորված ենթաարդյունքներում:

Առաջադրանք 1. Հանձնարարության ծանոթացում և մոբիլիզացում: Սույն հանձնարարության մեկնարկային առաջադրանքը կներառի Խորհրդատուի թիմի մոբիլիզացում, ծրագրի բավարար ըմբռնման ձեռքբերում՝ հետագա էական տեխնիկական առաջադրանքները նախաձեռնելու նպատակով: Սա կներառի առկա տվյալների և հայեցակարգային նախագծային փաստաթղթերի ուսումնասիրություն, կապի հաստատում և աշխատանքային հարաբերությունների ստեղծում գործընկեր կազմակերպությունների հետ (ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԲՆ, տեղական և մարզային իշխանություններ, բնապահպանական ՀՎ-ներ, օժանդակ ծառայություններ մատուցողներ և այլն), և անհրաժեշտության դեպքում՝ օժանդակ տեխնիկական-փորձագիտական ռեսուրսների մոբիլիզացում: Այս առաջադրանքի գլխավոր մասը կլինի տարածքի հետ հանգամանորեն ծանոթացումը, այդ թվում՝ հանձնարարության նախագծման աշխատանքներին առնչվող հիմնական հարցերի նախնական գնահատումները: Նշված հիմնական հարցերն են. i) ամբողջ տարածքի տեսողական գնություն, ii) մակերևութային ջրերի ցամաքորդային (դրենաժային) հոսքերի նախնական գնահատում, iii) առկա ցանկացած հիդրոլոգիական և երկրատեխնիկական տվյալների ձեռքբերում, iv) տարածքի և շինությունների նախկին շահագործման պատմության սկզբնական ուսումնասիրություն, v) կոմունալ

ծառայությունների հասանելիության կետերի վերհանում, vi) շենքերի ամբողջականության և դրանց գործածելիության նախնական գնահատում, vii) հնարավոր բնապահպանական հարցերի նախնական գնահատում, և viii) սանիտարական պահպանման գոտիների պահանջների հաստատում: Առաջադրանք 1-ի ենթարդյունքները, որոնք կընդգրկվեն «Մեկնարկային հաշվետվության» մեջ, կլինեն՝ ա) տարածքի տեխնիկական պայմաններին ծանոթանալու հաշվետվություն՝ վերոնշյալ ուսումնասիրությունների մանրամասն նկարագրությամբ, բ) լրացուցիչ ուսումնասիրության և նախագծման նկատառումների առաջարկներ, այդ թվում՝ վտանգավոր քիմիական թափոնների կառավարման միջազգային պահանջների արտացոլմամբ, գ) ամբողջ հանձնարարության աշխատանքների իրականացման մոտեցումների քննարկում պատվիրատուի և շահառուների հետ և համաձայնեցում, և սույն հանձնարարության աշխատանքների թարմացված պլան (Խորհրդատուի տեխնիկական առաջարկի պլանի հիման վրա), դ) հանձնարարության իրականացման կարգավիճակի նկարագրություն/հաստատում:

Առաջադրանք 2. Տարածքի պայմանների մանրամասն ուսումնասիրություն: Այս առաջադրանքը ներառում է տարածքի (նկ. 4-ի (8)) հիմնական պայմանների վերլուծական գնահատում, որտեղ կվերհանվեն լրացուցիչ տվյալներ և իմացություն՝ եթե այդպիսիք կպահանջվեն ելնելով Առաջադրանք 1-ի նախնական գնահատումներից: Դա մասնավորապես կներառի.

- Տարածքի քարտեզագրման և հողաչափական աշխատանքները՝ ձեռք բերելու հիմնական տվյալներ և բնութագրերի վերաբերյալ տեղեկություն ամբողջ տարածքի վերաբերյալ՝ նշելով տեղադրությունները և բարձրությունները, բոլոր հիմնական հատկանիշները՝ այդ թվում՝ տարածքի սահմանները, վերգետնյա և ստորգետնյա կառույցները և մուտքի ճանապարհները, նախկին կոմունալ ծառայությունների ուղեգծերը և միացման կետերը:
- Մակերևութային զամաքուրդի/հիդրոլոգիական վերլուծությունը, որով կորոշվեն ջրահեռացման սխեմաները և ուղեգծերը դեպի տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս, այդ թվում՝ ջրընդունիչ ուղղությունների և (կամ) ստորերկրյա ջրային հորիզոնների սնման մարզերի բացահայտում:
- Տարածքի պատմության գնահատում, այդ թվում այն հնարավոր վայրերի, որտեղ տեղի են ունեցել ածխաջրածիններ պարունակող վառելիքի կուտակում, գործածում կամ թափվածքներ, աղբի թափման վայրերի և բնութագրերի և տարածքի՝ մտահոգություն ներկայացնող այլ գործածությունների ուսումնասիրություն:
- Հողոտերկրաբանական հետազոտություն՝ կազմելու տարածքի ընդերքի երկրաբանական նկարագիրը, ստորգետնյա ջրերի բնութագրերը և հիդրավլիկ գրադիենտը (հոսքը), այդ թվում՝ վտանգավոր թափոնների կառավարման աշխատանքների համար հատկացվող հավանական տեղամասերից դեպի վեր և դեպի վար ստորգետնյա ջրերի որակի ելակետային անալիզ:

Առաջադրանք 2-ի ենթարդյունքների հիման վրա կկազմվի «Տարածքի հետազոտման հաշվետվություն»-ը, որը կներառի տարածքի գնահատման վերոնշյալ թեմատիկ ոլորտներից յուրաքանչյուրի արդյունքները մանրամասնող գլուխներ:

Առաջադրանք 3. Շենքերի և ենթակառուցվածքների գնահատում: Այս առաջադրանքը կներառի կառույցի նպատակային գործառնության համար հետաքրքրություն ներկայացնող առկա շենքերի և հիմնական մուտքի / կոմունալ ենթակառուցվածքների ինժեներական ամբողջականության գնահատումը, որոնք հնարավոր է, կօգտագործվեն տարածքի կառուցման և շահագործման համար՝ որպես քիմիական վտանգավոր թափոնների կառավարման օբյեկտի: Մանրամասն գնահատման ենթակա շենքային կառույցները հետևյալն են. i) հիմնական պահեստի շենքը՝ նկ. 4-ում շինություն (1); ii) հիմնական պահեստի շենքին հարակից ապասարկող աշխատակազմի օգտագործման օժանդակ շենքը (2); iii) փոքր պահեստների շենքերից երկրորդը՝ առավել բարվոք վիճակում (3); iv) մուտքի

դարպասների մոտ գտնվող առկա կառույցները. տրանսֆորմատորային կայան՝ (4) և պահակակետ՝ (5); v) անձրևաջրերի կուտակման հոր և պոմպակայան (6); vi) ասեպտիկ հոր (7): Յուրաքանչյուր դեպքում պետք է որոշվեն կառույցների անխաթարությունը, պաշտպանվածությունը եղանակային ազդեցություններից (օր., տանիքների անխաթարությունը) և կոմունալ ծառայությունների, դռների, պատուհանների, օդափոխության և հակահրդեհային համակարգերի տեղակայման համար պիտանիությունը: Մուտքի և կոմունալ ենթակառուցվածքների առումով ինժեներական տեսակետից պետք է գնահատվեն և նախագծվեն նաև հետևյալների հիմնական վիճակը և հնարավորությունները. i) մուտքը և ճանապարհը դեպի վերոնշյալ շինությունները, ii) հիմնական պահեստի և որևէ այլ բեռնման հարթակ(ներ)ի տարածք(ներ)ը, iii) տարածքի և շինությունների անվտանգության ենթակառուցվածքները՝ ընդհանուր տարածքի և առավել ակտիվ օգտագործվող հատվածի ցանկապատի (ներառյալ դարպասները) կառուցում անվտանգության գոտու ապահովման նորմերին համաձայն: Առաջադրանք 3-ի ենթարդյունքը կլինի «Շինությունների և ենթակառուցվածքների գնահատման հաշվետվություն»-ը, որում կփաստաթղթավորվեն վերոնշյալ աշխատանքների արդյունքները, կտրամադրվեն մանրամասն առաջարկություններ շինությունների և ենթակառուցվածքների հետագա գործածելիության, ինչպես նաև ինժեներական, և առաջարկվող անհրաժեշտ լրացուցիչ նյութերի և աշխատանքների ընդգրկման վերաբերյալ՝ սույն փաստաթղթում սահմանված գործածությունների նպատակով պահանջվող արդիականացման համար:

Առաջադրանք 4. Մանրամասն նախագծային փաթեթի պատրաստում: Այս առաջադրանքը կներառի սույն հանձնարարության առանցքային աշխատանքը, մասնավորապես՝ օբյեկտի որպես քիմիական ՎԹ կառավարման կենտրոնի և պահեստավորմանն առնչվող նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթի և տեխնիկական մասնագրերի մշակումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարգավորող մարմնի կողմից հաստատմամբ: Այն կներառի, սակայն չի սահմանափակվի հետևյալ բաղադրիչներով.

- Անվտանգության ենթակառուցվածքները, ներառյալ մուտքի դարպասը, ընդհանուր տարածքի սահմանային ցանկապատը, ինչպես նաև առաջարկվող ակտիվ գործողությունների և պահեստավորման տարածքների բարձր մակարդակի անվտանգության ցանկապատումը:
- Արտաքին սահմանային, մուտքի և ներտարածքային ճանապարհների հատվածների նորոգումը:
- Շինարարական աշխատանքներ ընդհանուր տարածքի անձրևաջրերի կառավարման համակարգի համար, որը կառանձնացնի հոսքերը տարածքի ակտիվ և մյուս հատվածներից:
- Հիմնական պահեստի շենքի նորոգում/վերականգնում՝ ՄԱԿ-ի արտոնագրված և պաշտոնապես ընդունված այլ պահանջների համաձայն փաթեթավորված կազմաձևումներով (կոնֆիգուրացիաներ)՝ տակառների տեսքով՝ տակդիրների վրա կամ իրենցից «խոշոր պարկ» ներկայացնող տարաներով, ինչպես նաև այլ սահմանված ձևաչափով փաթեթավորմամբ՝ կիրառվող միջազգային գործելակերպերին համապատասխան քիմիական ՎԹ-ներ անվտանգ պահեստավորելու՝ կարգավորված տեղադրելու հնարավորությամբ; պահեստի անվտանգ շահագործման նպատակին համապատասխան հատակի, պատերի, առաստաղի կոնստրուկցիաների, բացվածքների, անխոչնդոտ մուտք-ու-ելքի, լուսավորության, օդափոխության, պահանջվող ջերմաստիճանային ռեժիմի պահպանման, անվտանգության ծայնա-լուսային ազդանշանային համակարգերի և պահեստի գործառնությունները ապահովող այլ պահանջվող բաղադրիչների առկայությամբ:
- Փոքր պահեստի շենքը պետք է նորոգվի այնպես, որ ծառայի որպես թափոնների և սարքավորումների լրացուցիչ պահեստ կամ հավանական օժանդակ կառույց աղտազերծման (հավանական է նաև՝ հողի) հնարավոր գործողությունների համար: Այս փոքր պահեստի նորոգման

պահանջները նույնն են, ինչպես վերը ներկայացված հիմնական պահեստի նորոգման և շահագործման պահանջները:

- Նպատակահարմար է, որ բաց տեղանքի առավել հարմարավետ և տեխնիկայի շահագործման համար հեշտ հասանելի տարածքում կառուցվի ժամանակավոր պահեստավորման ծածկ/կառույց (24մx12մx5մ) ոչ պատշաճ փաթեթավորված ՎԹ-ի կամ աղտոտված հողի ժամանակավոր տեղակայման համար: Այս տարածքը պետք է ունենա հատուկ այդ նպատակի համար կառուցված անձրևաջրերի հավաքման հնարավորություն և լինի որոշակի բարձրության պատնեշներով շրջափակված:
- Էլեկտրականության մատակարարման և օգտագործման համակարգը, ջրի և բնական գազի ծառայությունները, ինչպես նաև սանիտարական թափոնաջրերի կառավարումը, արտաքին լուսավորության և անվտանգության համակարգերը, ներառյալ էլեկտրականության վահանակները և տրանսֆորմատորները, հրդեհաշիջման արհեստական լճակը և սարքավորումները, թափոնաջրերի հեռացումը, և այլն:
- Աշխատակազմի օգտագործման օժանդակ շինություն աշխատողների համար ստեղծվող հարմարությունների նպատակով՝ ներառյալ աշխատասենյակ, ճաշարան, հանդերձարան, սանհանգույց:

Այս առաջադրանքի ենթադրյունքը կլինի ամբողջական նախագծային փաթեթը, որը յուրաքանչյուր բաղադրիչի համար հարկ եղած դեպքում կպարունակի.

1. Ճարտարապետա-շինարարական գծագրեր
2. Ճարտարագիտական և տեխնիկական գծագրեր
3. Աշխատանքների կազմակերպման մեթոդաբանություն
4. Աշխատանքների իրականացման ժամանակացույց
5. Աշխատանքների նախահաշիվներ
6. Ծավալաթերթի պատրաստում
7. Տեխնիկական մասնագրեր
8. Այլ պահանջվող նյութեր և փաստաթղթեր:

Առաջադրանք 5. Մշակել օբյեկտի գործառնական պլաններ և ընթացակարգեր: Այս առաջադրանքի ներքո կմշակվեն ընդհանուր գործառնական պլաններ, որոնք կներառեն օբյեկտի աշխատակազմի հավաքագրումը, օբյեկտի գործարկումը և մեկնարկը, այդ թվում՝ գործառնական ընթացակարգերի ամբողջ շարքը, որոնցից են՝ i) թափոնային նյութերի ընդունում, ii) նյութերի տեղավորում, iii) գույքի նկատմամբ վերահսկողություն, iv) ՈԱ/ՈՀ (Որակի Ապահովում/Որակի Հսկողություն) ընթացակարգեր, v) բնապահպանական, առողջապահական և անվտանգության (PUL/EHS) ընթացակարգեր, vi) պատահարների մասին զեկուցման ընթացակարգերը, vii) հանրային խորհրդակցություններ և տեղեկությունների բացահայտման ընթացակարգեր, viii) արտակարգ իրավիճակներին արձագանքման ընթացակարգեր: Այս առաջադրանքի ենթադրյունքը կլինի լիարժեք կերպով մշակված «Գործառնական պլանավորման և ընթացակարգերի ձեռնարկ»-ը:

Առաջադրանք 6. Պահեստային շինության ու տարածքի վերակառուցման և ընտրված աշխատանքային գործողության պլանի մրցութային փաթեթի/տեխնիկական մասնագրի մշակում: Սույն առաջադրանքը ներառում է Առաջադրանք 4-ի և 5-ի արդյունքում նախագծված աշխատանքային գործողությունների պլանին համահունչ մրցութային փաթեթի/տեխնիկական մասնագրերի պատրաստում՝ նախագծված աշխատանքների կատարման համար համապատասխան որակավորված կազմակերպություն ընտրելու հետագա մրցութային գործընթացում օգտագործելու համար: Տեխնիկական մասնագրերը պետք է համահունչ լինեն ազգային պահանջներին և նորմերին, որոնք ներկայացվող են ՄԱՁԾ/ԳԷՀ-ի

ներդրմանն ի հավելումն տեղական բյուջեի մասնակցությամբ աշխատանքների ձեռքբերման մրցույթի անցկացմանը: Փաթեթը պետք է ներառի նաև բոլոր աշխատանքների կատարողական, շինարարական նյութերի, օբյեկտի շահագործման ժամանակ դրա գործառնական անվտանգությունն ապահովող սարքերի, սարքավորումների նկատմամբ պահանջները: Սկզբունքորեն Առաջադրանք 6-ի վերջնական արդյունքը պետք է լինի Կոտայքի ազգային վտանգավոր թափոնների կառավարման կենտրոնի Տեխնիկական մասնագրերը և Մրցույթային փաստաթղթերի փաթեթը:

Առաջադրանք 7. Մշակել և ներկայացնել շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման փաստաթղթերը և ապահովել դրանց հաստատումը: Կոտայքի պահեստային տարածքի կառուցումը պետք է անցնի բնապահպանական փորձաքննության եզրակացության ստացման ազգային կարգավորող գործընթացով (ըստ 21.06.2014 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի) ՀՀ բնապահպանության նախարարության (ՀՀ ԲՆ) միջոցով, և ապահովի համապատասխանություն ՄԱԶԾ սոցիալական և բնապահպանական ստանդարտներին, ինչպես նաև բնապահպանական, առողջապահական և անվտանգության (ԲԱԱ/ΕHS – Environmental, Health and Safety) ընթացակարգերին (լրացուցիչ տեղեկությունների համար այցելել <http://goo.gl/YksYIk> և <http://www.undp.org/ses>): Թեև յուրաքանչյուրում ներառված տեղեկություններն ընդհանուր առմամբ կլինեն ընդհանրական, սակայն կարող են տարբերվել ձևաչափով և մոտեցմամբ, մի բան, որը Խորհրդատուն պետք է ուսումնասիրի և հարմարեցնի: Ազգային բնապահպանական փորձաքննության դեպքում պահանջվող փաստաթուղթը, որը պետք է ներկայացվի, կոչվում է ՇՄԱԳ հաշվետվություն, որը պետք է համապատասխանի ՀՀ ԲՆ կիրառած չափորոշիչներին, կանոններին և ընթացակարգերին և հիմնված լինի ընտրված նախագծային և գործառնական պլանավորման նյութերի վրա, ինչպես սահմանված է վերը՝ 4-րդ և 5-րդ առաջադրանքներում՝ օգտագործելով 2-րդ առաջադրանքի ներքո հավաքված նյութերը: ՄԱԶԾ/ԳԷՀ-ի փաստաթղթերը կներառեն բարձր մակարդակի տիպային (ստանդարտ) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ), սոցիալական գնահատումը (ՍԳ) և բնապահպանական կառավարման պլանը (ԲԿՊ): Վերջինս կմանրամասնի միջոցառումների ստուգանքները, որոնք պետք է կիրառվեն և ենթարկվեն մշտադիտարկման տեսչական ստուգումների երաշխավորման գործընթացում՝ որպես ծրագրի մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերի մաս: Ինչ վերաբերում է ժամկետներին, ազգային գործելակերպը պահանջում է, որ ՇՄԱԳ հաշվետվությունը և դրանից բխող որոշումը բնապահպանական փորձաքննության վերաբերյալ (ՇՄԱԳ-ի փորձագիտական եզրակացություն) պատրաստվեն և ներառվեն շինարարական աշխատանքների նախագծային փաստաթղթերի փաթեթում, որը պետք է այնուհետև հաստատման նպատակով ներկայացվի տեխնիկական փորձաքննության (6-րդ առաջադրանք): Խորհրդատուից պահանջվում է ծրագրի նախաձեռնողի անունից փաստաթղթերը ներկայացնել բնապահպանական փորձաքննության հաստատման համար: Այլ կանոնակարգման /ընթացակարգային/ հաստատման պահանջները և պատասխան նախաձեռնությունները կորոշվեն ըստ անհրաժեշտության:

ՄԱԶԾ/ԳԷՀ-ի անվտանգության ապահովման փաստաթղթերի ձևավորման և ներկայացման համար ժամկետային պահանջներն ավելի կարճ են և կպահանջվեն նախքան ծրագրի այս հատվածի համար ներդրումային միջոցների բացթողնման վերաբերյալ որևէ որոշման ընդունումը՝ համաձայն ՄԱԶԾ-ի ընթացակարգերի: Ակնկալվում է, որ ազգային բնապահպանական փորձաքննության գործընթացը կտևի մինչև 9 շաբաթ՝ ՇՄԱԳ-ի վերջնական հաշվետվության ներկայացումից հետո: Ակնկալվում է, որ ՄԱԶԾ/ԳԷՀ-ի երաշխավորիչ հավանության տրման գործընթացը կտևի 10 շաբաթ: Սկզբունքորեն Առաջադրանքի 5-ի հիմնական ենթադրյունքները կհանդիսանան համապատասխան փորձաքննություն անցած և հաստատված փաստաթղթերը: Հարկ է նշել, որ ազգային բնապահպանական փորձաքննության (ՇՄԱԳ) եզրակացություն տալու գործընթացին առնչվող բոլոր վարձավճարները և գանձույթները (ներկայումս սահմանված վարձավճարը 500,000 ՀՀԴ է) պետք է

վճարվեն համաձայն ազգային կանոնակարգի պահանջների:

Առաջադրանք 8. Մշակել և ներկայացնել նախագիծը տեխնիկական փորձաքննության՝ համաձայն ազգային կանոնակարգերի և պահանջների, ապահովել դրա հաստատումը: Ելնելով 4-րդ, 5-րդ 6-րդ առաջադրանքների արդյունքներից, Խորհրդատուն, իր օբյեկտի նախագծման «հեղինակ» կարգավիճակի հիման վրա կպատրաստի ներկայացվող անհրաժեշտ նյութերը պահեստային օբյեկտի շրջակա տարածքի և կառույցների նախագծային աշխատանքների համար պահանջվող տեխնիկական հավանությունների համար՝ ազգային թույլտվությունների և հաստատումների պահանջների հիման վրա: Տարածքի աշխատանքների նախագծումը պետք է անցնի ճարտարագիտական/շինարարական աշխատանքների փորձաքննություն համապատասխան կազմակերպության կողմից՝ համաձայն պետական կանոնակարգերի, և պետք է ներառի 6-րդ առաջադրանքում նկարագրված ազգային ՇՄԱԳ-ի արդյունքները: Որպես նախաձեռնող՝ ՀՀ ԱԽՆ-ը (Արտակարգ իրավիճակների նախարարությունը) տեխնիկական նախագծային փաթեթը (ՇՄԱԳ-ի դրական եզրակացությունը կներառվի տեխնիկական նախագծային փաթեթում) կներկայացնի տեխնիկական փորձաքննության և, հիմնվելով տեխնիկական փորձաքննության առաջարկությունների վրա, քննության կառնվի նախագծի հավանության հարցը: Խորհրդատուն պետք է օժանդակի փաթեթի ներկայացմանը՝ ընդհուպ մինչև հաստատումը: Այլ կանոնակարգման /ընթացակարգային/ հաստատման պահանջներ և պատասխան նախաձեռնություններ կորոշվեն ըստ անհրաժեշտության: Նախագծված վերակառուցման աշխատանքների իրականացումը ենթակա է տեխնիկական և հեղինակային հսկողության:

8-րդ առաջադրանքի գլխավոր ենթարդյունքը կլինի ճարտարագիտական/շինարարական աշխատանքների դրական տեխնիկական փորձաքննության եզրակացությունը և հաստատումը: Հարկ է նշել, որ տեխնիկական փորձաքննության հավանության գործընթացին առնչվող բոլոր վարձավճարները և գանձույթները (ներկայումս սահմանված վարձավճարը 25000 ՀՀԴ է, իսկ նախագծի փորձաքննության վճարը բանակցելի է նախագծված գործառնական աշխատանքների մոտավոր բյուջեի 2-3%-ի սահմաններում) պետք է վճարվեն համաձայն ազգային կանոնակարգի պահանջների:

Առաջադրանք 9. Վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողություն: Կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում Խորհրդատուն պետք է իրականացնի հեղինակային հսկողություն, ներառյալ՝ փաստաթղթերի, տվյալների և կառուցման ներկա վիճակի վերաբերյալ հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը պատվիրատուին և մյուս շահագրգիռ կողմերին:

Առաջադրանք 10. Կենտրոնի շահագործման գործառնությունն իրականացնող ղեկավար և օժանդակ անձնակազմի վերապատրաստում: Այս առաջադրանքի ներքո Խորհրդատուն կմշակի վերապատրաստման ծրագիր և կվարի Կոտայքի օբյեկտի գործարկման աշխատանքներում ներգրավված գործառնական / օժանդակ անձնակազմի և տեղամասի ղեկավար անձնակազմի համար մշակված հատուկ դասընթացներ՝ նրանց նախապատրաստելու կենտրոնի շահագործմանը: Վերապատրաստման ծրագրի մանրամասն շրջանակը, դրա տարբեր բաղադրիչները և պահանջվող ուսուցման մակարդակները կորոշվեն համապատասխան շահագրգիռ կողմի հետ: Այդուհանդերձ, վերապատրաստման ծրագրի կազմման ընթացքում պետք է օգտագործվեն ընդունված ազգային և միջազգային տիպային ուղեցույցեր և կներառվեն հետևյալ թեմաները (չսահմանափակվելով միայն դրանցով). i) Կոտայքի վտանգավոր թափոնների օբյեկտի ընդհանուր գործունեությունը և նպատակը, ii) տարածք մուտք գործելու և տեղաշարժման կանոնները, iii) ԱՊՄ-երի (անհատական պաշտպանության միջոցներ) օգտագործումը, iv) հիմնական գործառնական աշխատանքների

ընթացակարգերը, iv) բնապահպանական գործելակերպերը՝ նվազագույնի հասցնելու աղտոտիչների տարածումը, v) արտակարգ իրավիճակներին արձագանքման ընթացակարգերը, vi) առողջության մոնիթորինգին ներկայացվող պահանջները, vii) գրանցումների կատարումը/վարումը, viii) բնապահպանական և առողջապահական անվտանգության հարցերի վերաբերյալ հաղորդակցման և հետադարձ կապի մեխանիզմները, ix) խախտումների զեկուցման կարգը , x) հաղորդակցումը/կապը հանրության հետ: Դասընթացը կմատուցվի հայերեն լեզվով և պետք է համադրի լսարանային և գործնական պարապունքների ձևաչափերը: Հիմնական վերապատրաստվողների թիվը՝ մինչև 12 անձ, ովքեր, ինչպես ակնկալվում է, կընտրվեն ՀՀ ԱԽՆ-ի գործառնական անձնակազմից, կորոշի շահագրգիռ կողմը՝ խորհրդակցելով Խորհրդատուի հետ և հիմնվելով գործառնական աշխատակազմին ներկայացվող պահանջների վրա, որոնք սահմանված են ընտրված գործառնական պլանում (5-րդ առաջադրանք): Վերապատրաստման դասընթացին կօժանդակի վերապատրաստման ձեռնարկը, որը, ներկայացվող ուսուցողական նյութերի հետ միասին, կկազմի առաջադրանքի հիմնական ենթարդյունքը: Ակնկալվում է, որ գործառնական անձնակազմի վերապատրաստումը կիրականացվի օբյեկտի շահագործումը սկսելուց անմիջապես առաջ, ուստի կարելի է ակնկալել վերապատրաստման դասընթացի առնվազն երկու նստաշրջան՝ աշխատանքի ընթացքում իրականացվող գիտելիքների թարմացման և արդիականացման պարբերական կարճատև դասընթացներին զուգահեռ (ըստ անհրաժեշտության): Կարելի է (ցանկալի է) նաև դիտարկել դասընթացի մատուցումը օպտիմալացնելու փուլ-առ-փուլ «վերապատրաստողների վերապատրաստում» մոտեցումը, որպեսզի ՀՀ ԱԽՆ-ում լինի որակավորված վերապատրաստողների խումբ: Հարկ է նշել, որ լրացուցիչ մասնակիցների մասին խնդրանք կարող են ներկայացնել տարբեր շահագրգիռ կազմակերպություններ, եթե նման մասնակցություն պահանջվի ՀՀ ԲՆ-ի կարգավորող աշխատակազմի, շահագրգիռ կողմի արտակարգ իրավիճակների ծառայությունների ընդհանուր անձնակազմի, տեղական իշխանությունների, և ուրիշների համար: Հարկ է նշել, որ Խորհրդատուի աշխատանքների շրջականը սահմանափակվում է վերապատրաստման ծրագրի կազմման, ուսուցման, ուսուցողական նյութերի և վերապատրաստման ձեռնարկի տպված օրինակների ապահովմամբ, ինչպես նաև ընտրված աշխատակազմի համար «վերապատրաստողների վերապատրաստում» անցկացնելով:

2. Խորհրդատուի պատասխանատվությունները և արդյունքների հանձնման ժամանակացույցը

Խորհրդատուի առաջնային պատասխանատվությունն է՝ համաձայնեցված ժամանակացույցի շրջանակում արդյունավետ կերպով իրականացնել վերոնշյալ առաջադրանքները և արդյունքները որակի և կարողությունների բարձր մակարդակով՝ ապահովելով պահանջվող ռեսուրսների և փորձագիտության կիրառումը՝ երբ և որտեղ դա պահանջվում է: Ստորև ամփոփված են պատվիրատուի ակնկալիքները արդյունքների առումով և մոտավոր ժամանակացույցը:

Առաջադրանք		Արդյունք	Մոտավոր տևողությունը (շաբաթներ)	Կատարման մոտավոր ամսաթիվը*
1-ին	Հանձնարարությանը ծանոթացում և մոբիլիզացում	Մեկնարկային հաշվետվություն	2 շաբաթ	3-րդ շաբաթ
2-րդ	Տարածքի պայմանների մանրամասն ուսումնասիրություն	Տարածքի հետազոտման հաշվետվություն	3 շաբաթ	4-րդ շաբաթ
3-րդ	Շենքերի և ենթակառուցվածքների գնահատում	Շենքերի և ենթակառուցվածքների գնահատման հաշվետվություն	3 շաբաթ	4-րդ շաբաթ
4-րդ	Մանրամասն նախագծային փաթեթի պատրաստում	Ամբողջական նախագծային փաթեթ	7 շաբաթ (ներառյալ)	10-րդ շաբաթ

Առաջադրանք		Արդյունք	Մոտավոր տևողությունը (շաբաթներ)	Կատարման մոտավոր ամսաթիվը*
			ՄԱԶԾ-ի//ԾՂԳ-ի կողմից որոշումների կայացման 2 շաբաթները)	
5-րդ	Մշակել օբյեկտի գործառնական պլաններ և ընթացակարգեր	Գործառնական պլանավորման և ընթացակարգերի ձեռնարկ	4 շաբաթ	12-րդ շաբաթ
6-րդ	Ընտրված աշխատանքային գործողության պլանի մրցույթային փաթեթի մշակում	Աշխատանքային բացատրագրեր և Մրցույթային փաստաթղթերի փաթեթ	4 շաբաթ	14-րդ շաբաթ
7-րդ	Մշակել և ներկայացնել շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման փաստաթղթերը և ապահովել դրանց հաստատումը	ՇՄԱԳ հաշվետվություն՝ բնապահպանական փորձաքննության ներկայացվելու համար, շրջակա միջավայրի գնահատում (ՇՄԳ), սոցիալական գնահատում (ՍԳ) և բնապահպանական կառավարման պլան (ԲԿՊ)՝ ՄԱԶԾ-ի կողմից երաշխավորիչ վերանայման համար	15 շաբաթ (այդ թվում՝ մինչև 1 շաբաթ որոշումը հրապարակելու, մինչև 9 շաբաթ՝ փորձաքննության , 5 շաբաթ՝ ՇՄԱԳ-ի պատրաստման համար)	18-րդ շաբաթ
8-րդ	Մշակել և ներկայացնել տեխնիկական փորձաքննությունը համաձայն ազգային կանոնակարգերի և պահանջների, ապահովել դրա հաստատումը:	Տեխնիկական փորձաքննություն համար ներկայացվող փաստաթղթեր	4 շաբաթ գումարած 4 շաբաթ՝ հաստատման ժամանակահատվածը (պետք է որոշվի)	19-րդ շաբաթ նյութերի ներկայացման համար (կախված 6-րդ առաջադրանքի հաստատումից)
9-րդ	Հեղինակային հսկողության իրականացման աջակցություն	Տեսչական ստուգումների հաշվետվություններ, Հավաքված տվյալներ, Կառուցման ներկա վիճակի վերաբերյալ փաստաթղթեր	Պետք է որոշվի (մոտ 25 շաբաթ)	Պետք է որոշվի
10-րդ	Վերապատրաստման ծրագիր տարածքի գործառնական և վերահսկող անձնակազմի համար	Վերապատրաստման ձեռնարկ, Կրթական նյութեր, Վերապատրաստման մոդուլների/դասընթացի իրականացում, վերապատրաստողների վերապատրաստման անցկացում	5 շաբաթ	Պետք է որոշվի

*Շաբաթը՝ սկսած պայմանագրի ստորագրման օրվանից: Որոշ գործողությունների ժամկետները կարող են մասնակիորեն համընկնել:

Է. Հաշվետվությունների ներկայացում

Սույն հանձնարարության կատարման պայմանագիրը կկնքվի ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի հետ, տեխնիկական, վարչական և ֆինանսական հսկողությունը կապահովի Ծրագրի համակարգողը և գործառնական մակարդակում ամենօրյա համակարգումը կձեռնարկվի Ծրագրի ղեկավարման

գրասենյակի (ԾՂԳ) շինարար-ձարտարագետի և ՀՀ ԱԻՆ-ից նշանակված ներկայացուցչի (կոնտակտային անձի) կողմից: Ենթարոյունքների տեխնիկական վերանայումը «գործընկերը գործընկերոջը» ձևաչափով կապահովի ՄԱԶԾ-ի տեխնիկական հարցերով միջազգային խորհրդականը, և ՄԱԶԾ-ի տարածաշրջանային և գլխամասային գրասենյակների տեխնիկական աշխատակազմը: Արդյունքների վերանայման ժամանակացույցի նպատակներով Խորհրդատուն պետք է ենթադրի առնվազն մեկ շաբաթ արձագանքման ժամկետ՝ գործընկերների կողմից վերանայման և մեկնաբանությունների համար. վարչարարությունը և համակարգումը կիրականացվեն ԾՂԳ-ի միջոցով: Եթե աշխատանքը ներառում է նշանակալի որոշումների կայացում ՀՀ ԱԻՆ-ից, ՄԱԶԾ-ից և ԾՂԳ-ից նախագծի տարբերակների և ուղղվածության վերաբերյալ, ապա կենթադրվի երկու շաբաթվա ժամկետ:

Ը. Աշխատանքների իրականացման վայրը

Խորհրդատուի գրասենյակ և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի հարևանությամբ տեղակայված տարածք:

Թ. Խորհրդատվական ընկերության / գործընկերոջ / ենթակապալառուի որակավորումները

Խորհրդատվական ընկերությունը (Խորհրդատու) կարող է լինել միջազգային կամ ազգային՝ ինժեներական /շինարարական նախագծերի/ տեխնիկական ծառայություններ մատուցող ընկերություն, որը ունի վտանգավոր քիմիական թափոնների կառավարմանն առընչվող շինությունների նախագծման փորձ՝ այդ թվում միջազգային փորձառություն:

Խորհրդատուի ցուցադրած որոշակի տեխնիկական ունակությունները և փորձը, որոնք պետք է ներկայացվեն որակավորումների և ունակությունների գնահատման նպատակով, կներառեն.

- Հիմնավորումներ, որ խորհրդատվական ընկերությունը կայացած է վերոնշյալ ընդհանուր ծառայությունների ոլորտում և ունի առնվազն 10 տարվա ապացուցված փորձ (ընկերության նկարագիրը՝ փաստաթղթերով և պահանջվող փորձագիտության մեջ ունեցած փորձով), ինչպես նաև փորձ շինարարության, **հատուկ նշանակության հանրային օբյեկտների գնահատման և նախագծման ոլորտներում**: Վտանգավոր ապրանքներ և քիմիական նյութեր փաթեթավորող-փոխադրող և (կամ) պահեստավորող օբյեկտների նախագծման և գործառնական պլանավորման նույնպիսի փորձը համարվում է առավելություն:
- Աշխատանքների շրջանակում սահմանված պահանջվող տեխնիկական և ինժեներական ճյուղերում համապատասխան գնահատումներ և վերահսկողություն ձեռնարկելու ունակություն (հիմնավորումը՝ երաշխավորագրեր համապատասխան ծրագրերից), այդ թվում՝ ծախսերի գնահատում և տնտեսական գնահատում, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատում:
- Ծանոթություն Հայաստանում ազգային կարգավորող մարմինների կողմից բնապահպանական և տեխնիկական թույլտվությունների և հաստատումների տրման գործընթացներին. հիմնավորումը՝ նմանատիպ ծրագրերում թույլտվությունների և հաստատումների ստացման մասին տեղեկանքներ:
- Ներգրավվող մասնագիտական աշխատակազմի աշխատանքային կենսագրությունները.
 - Թիմի ղեկավար / Առաջադրանքի համակարգող՝ կառավարման առնվազն 10 տարվա փորձով,
 - Մեկ փորձագետ՝ անվտանգության միջազգային չափորոշիչների համաձայն կառուցված՝ վտանգավոր թափոնների կառավարման օբյեկտների նախագծման և շահագործման առնվազն

5 տարվա միջազգային փորձով,

- Մեկ փորձագետ՝ տարածքների հիդրոլոգիական և հիդրոերկրաբանական գնահատման առնվազն հինգ 5 տարվա փորձով,
- Մեկ ՇՄԱԳ-ի փորձագետ՝ առնվազն հինգ 5 տարվա փորձով,
- Մեկ շինարարական ինժեներիայի փորձագետ՝ առնվազն հինգ 5 տարվա փորձով,
- Մեկ փորձագետ վտանգավոր քիմիական թափոնները կառավարող օբյեկտի/պահեստի գործառնական և պահպանման, ինչպես նաև ուսուցանող-դասընթացավարի փորձով:

- Հայտի լեզուն՝ անգլերեն:

Ծրագրի շրջանակ, արդյունքներ, ենթարդյունքներ և աշխատանքներ

Ծրագրի նախագծման մշակված շրջանակ ըստ արդյունքների, ենթարդյունքների և աշխատանքների

Արդյունք	Ենթարդյունքներ	Աշխատանքի նկարագրություն
1-ին բաղադրիչ: Ժամկետանց պեստիցիդների պաշարների և թափոնների հավաքում և պարփակում/զսպում		
<p>Արդյունք 1.1 Առաջնահերթ ԿՕԱ պեստիցիդների թափոնների հեռացում Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցից, մնացորդային աղտոտման ապահով պարփակում նույն տարածքում, տեղանքի կայունացում և վերականգնում՝ տարածքն ապահովելով պատշաճ ինստիտուցիոնալ պայմանավորվածությունների համաձայն, որոնք թույլ են տալիս հասանելիության արդյունավետ սահմանափակումներ, մշտադիտարկում (մոնիտորինգ) և ապագա հողօգտագործման նկատմամբ վերահսկողություն՝ այդ ամենը հաստատելով իրազեկված հանրության կողմից</p>	<p>1.1.1 Նախագծային փաստաթղթեր, մրցույթի մասնագիր, իրականացման ընթացակարգեր՝ ձեռնարկելու պահանջվող աշխատանքները</p> <p>1.1.2 Բնապահպանական, առողջապահության և անվտանգության (ԲԱԱ՝ EHS) ընթացակարգերը փաստաթղթավորված են և հրապարակված՝ հիմնավորելու պահանջվող աշխատանքները</p> <p>1.1.3 ՇՄԱԳ և բնապահպանական փորձագիտական հավանություն՝ աշխատանքներն սկսելու համար</p> <p>1.1.4 Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցից 900 տ մաքուր պեստիցիդների և բարձր կոնցենտրացիայի ԿՕԱ թափոնների հեռացում դեպի անվտանգ պահեստարան(եր)</p> <p>1.1.5 Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցից 700 տ ԿՕԱ թափոնների հեռացումը բարձր կոնցենտրացիայի հողի տեսքով դեպի անվտանգ պահեստարան(եր) ավարտված է</p> <p>1.1.6 12 000 տ ցածր և չափավոր աղտոտված հողի ապահով պարփակում նույն տարածքում կառուցված աղբավայրում՝ Նուբարաշենի տարածքում</p> <p>1.1.7 Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի վերականգնման և հասանելիության նկատմամբ վերահսկողության դրույթներն առկա են, և շրջակա հողերի և ցամաքեցման (դրենաժ) կայունացման շինարարական աշխատանքներն ավարտված են</p>	<p>1.1.1 Տարածքի մանրամասն գնահատում, մաքրման նախագիծ, երկրատեխնիկական/հիդրոլոգիական կայունացման նախագիծ, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ), թույլտվությունների և մրցութային փաստաթղթերի պատրաստում արտափորման աշխատանքների/փաթեթավորման/պարփակման և տեղանքի աշխատանքների վերահսկողության, այդ թվում՝ ԿՕԱ պեստիցիդների թափոնների կատեգորիաներն առանձնացնելու նպատակով տեղում անալիզներ կատարելու հնարավորությունների համար</p>
		<p>1.1.2 Տարածքի հասանելիության և ապահովության երաշխավորման ենթակառուցվածքների տեղադրում՝ մաքրման և վերականգնման աշխատանքների համար</p> <p>1.1.3 ԺՊ-ների թաղման խցերի և առնչվող այլ առաջնահերթ ԿՕԱ պեստիցիդների թափոնների արտափորում, փաթեթավորում և հեռացում, այդ թվում՝ մոտ 900 տ 1-ին կատեգորիայի ԿՕԱ պեստիցիդների թափոններ (մաքուր պեստիցիդներ և ԿՕԱ պեստիցիդների թափոններ >30% մաքուր պեստիցիդներ)</p> <p>1.1.4 2-րդ և 3-րդ կատեգորիայի հողերի վերաբաշխում, առանձնացում և նախնական պարփակում</p> <p>1.1.5 7 000 տ ԿՕԱ-ներ պարունակող 2-րդ կատեգորիայի թափոնների արտափորում, փաթեթավորում և հեռացում (բարձր կոնցենտրացիայի հողեր՝ կիրառելով առողջության ռիսկերի > 1500 մաս միլիոնի մեջ չափանիշները)</p> <p>1.1.6 12 700 տ ԿՕԱ-ներ պարունակող 3-րդ կատեգորիայի թափոնների վերջնական պարփակում նույն տարածքում (< 1 500 մաս միլիոնի մեջ առողջության ռիսկի չափանիշներ, >0,7 մաս միլիոնի մեջ գյուղատնտեսական ռիսկի չափանիշներ)</p>

Արդյունք	Ենթարդյունքներ	Աշխատանքի նկարագրություն
	<p>1.1.8 Իրականացվել է վերապատրաստում 20 տեղացի տեխնիկական և կարգավորող աշխատակիցների համար՝ ի աջակցություն Նուբարաշենի գործառնությունների</p> <p>1.1.9 Կազմակերպվել են մոտ 5 հանրային խորհրդակցությունների միջոցառումներ և իրականացվել են 10 հանրային փաստաթղթեր/համացանցի/մամուլի նյութեր/հրապարակումներ</p>	<p>1.1.7 Տարածքի վերականգնում, տեղանքի երկրատեխնիկական/հիդրոլոգիական կայունացման ձեռնարկում, ցամաքուրդի բարելավում, մոնիտորինգի ենթակառուցվածքի տեղակայում և երկարաժամկետ հողօգտագործման նկատմամբ վերահսկողության պայմանավորվածությունների հաստատում</p> <p>1.1.8 Վերապատրաստում վտանգավոր թափոնների և աղտոտված տարածքի կառավարման գործառնական և երաշխիքների ապահովման հարցերով, այդ թվում՝ տարածքի արտափորման, փաթեթավորման և վերականգնման գործառնություններ. մոտ 20 տեղացի տեխնիկական աշխատակիցներ վերապատրաստվել են տարածքում աշխատելու համար</p> <p>1.1.9 Օժանդակություն հանրային խորհրդակցություններին Նուբարաշենի տարածքի աշխատանքների նախագծման, թույլտվությունների տրամադրման, գործառնական և վերականգնման/մոնիտորինգի փուլերի համար Կազմակերպվել են մոտ 5 ֆորմալ միջոցառումներ և պատրաստվել են 10 հանրային փաստաթղթեր /համացանցի/մամուլի նյութեր/հրապարակումներ</p>
<p>Արդյունք 1.2: Վտանգավոր թափոնների կառավարման Կոտայքի ներպետական տարածքի կառուցում ապահով պահեստարանով և հիմնական ենթակառուցվածքներով՝ թույլ տալու ՎԹ-ների մաքրման միջոցով հողերի վերականգնման տեխնոլոգիաների կառուցումը և գործարկումը՝ ԿՕԱ պետիցիոնների թափոնների և ԺՊ պաշարների ապահով պահեստավորման և ԿՕԱ պետիցիոնների թափոններով աղտոտված հողերի մաքրման համար</p>	<p>1.2.1 Նախագծային փաստաթղթեր, մրցույթի մասնագիր, իրականացման ընթացակարգեր՝ ձեռնարկելու Կոտայքի վտանգավոր թափոնների (ՎԹ) օբյեկտի տարածքի կառուցման աշխատանքները</p> <p>1.2.2 Բնապահպանական, առողջապահության և անվտանգության (ԲԱԱ՝ EHS) կիրառելի ընթացակարգերը փաստաթղթավորված են և հրապարակված՝ հիմնավորելու պահանջվող աշխատանքները</p> <p>1.2.3 ՇՄԱԳ և բնապահպանական փորձագիտական հավանություն՝ Կոտայքի ՎԹ օբյեկտի տարածքի կառուցման աշխատանքներն սկսելու համար</p> <p>1.2.4 ՎԹ կառավարման Կոտայքի ներպետական տարածքը կառուցված է և շահագործվում է միջազգային չափորոշիչների համաձայն</p> <p>1.2.5 Օբյեկտի գործարկում 1050 տ ԿՕԱ պետիցիոնների թափոնների և ԺՊ պաշարների պահեստավորման համար, որոնք ենթակա են</p>	<p>1.2.1 Մանրամասն նախագծում, ՇՄԱԳ, թույլտվությունների տրամադրման և մրցույթի մշակում և շինարարության վերահսկում Կոտայքի վտանգավոր թափոնների (ՎԹ) օբյեկտի կառուցման նպատակով</p>

Արդյունք	Ենթարդյունքներ	Աշխատանքի նկարագրություն
	<p>արտահանման՝ բնապահպանորեն անվտանգ ոչնչացման նպատակով</p> <p>1.2.6 Օբյեկտի գործարկում՝ տեղակայելու վերականգնման տեխնոլոգիաներ՝ 7100 տ ԿՕԱ պեստիցիդներով բարձր աղտոտման ենթարկված հողի բնապահպանորեն անվտանգ եղանակով մաքրման համար</p> <p>1.2.7 ՎԹ օբյեկտի 20 գործառնական աշխատակիցներ վերապատրաստվել են ՎԹ կառավարման, երաշխիքների ապահովման և ԲԱԱ գործելակերպերի հարցերով</p> <p>1.2.8 Կազմակերպվել են մոտ 5 հանրային խորհրդակցությունների միջոցառումներ և իրականացվել են 10 հանրային փաստաթղթեր/համացանցի/մամուլի նյութեր/հրապարակումներ</p>	
		<p>1.2.2 Պահեստավորման տարածքի արդիականացում և շինարարական աշխատանքներ՝ Նուբարաշենից և ԺՊ պահեստարաններից 1100 տ 1-ին կատեգորիայի ԿՕԱ պեստիցիդների և ԺՊ փակ տարածքում ապահով պահեստավորման տարողությամբ, ծածկված արտաքին ապահով պահեստավորման տարածք նույն տեղում Նուբարաշենից մինչև 7100 տ խիստ աղտոտված հողի համար (2-րդ կատեգորիա) և ԺՊ պահեստարանի մաքրումներ</p> <p>1.2.3 Նուբարաշենից ստացված 1-ին և 2-րդ կատեգորիաների նյութերի և պահեստներից ստացված ԺՊ պաշարների ընդունման, պահեստավորման և տիրապետման գործողություններ</p> <p>1.2.4 Վերապատրաստում տեխնիկական և երաշխիքների ապահովման հարցերով՝ վտանգավոր թափոնների օբյեկտի շահագործման նպատակով Ներգրավվել են ԱԲՆ-ից կամ ծառայություններ մատուցող կազմակերպություններից (որոնց հետ կնքվել են պայմանագրեր) մոտ 20 գործառնական աշխատակիցներ</p> <p>1.2.5 Օժանդակություն հանրային խորհրդակցություններին Կոտայքի օբյեկտի մշակման/կառուցման աշխատանքների նախագծման, թույլտվությունների տրամադրման, գործառնական փուլերի համար Կազմակերպվել են մոտ 5 ֆորմալ միջոցառումներ և պատրաստվել են 10 հանրային փաստաթղթեր /համացանցի/մամուլի նյութեր/հրապարակումներ</p>
<p>Արդյունք 1.3: Հնուց մնացած ԺՊ նշանակալի պահեստները</p>	<p>1.3.1 Ավարտվել/փաստաթղթավորվել են</p>	<p>1.3.1 ԺՊ պահեստարանների գննության գնահատումներ, պաշարների փաթեթավորում,</p>

Արդյունք	Ենթարդյունքներ	Աշխատանքի նկարագրություն
<p>փաթեթավորել և հեռացրել են ԺՊ պաշարները, և տարածքի մնացորդային աղտոտվածությունը մաքրվել է:</p>	<p>24 բացահայտված՝ հնուց մնացած ԺՊ պաշարների տարածքների և 150 տ ԺՊ պաշարների զննության գնահատումները, մաքրման մնացորդները փաթեթավորվել և հեռացվել են Կոտայքի ՎԹ օբյեկտ: 1.3.2 Աղտոտված տարածքի և ռիսկերի մանրամասն գնահատումները նվերականգնման/մաքրման աշխատանքների նախագծումները 6 բացահայտված առաջնահերթ տարածքներում ավարտվել/փաստաթղթավորվել են 1.3.3 6 բացահայտված առաջնահերթ տարածքների էքսկավացիան, հեռացումը, վերականգնումը և (կամ) պարփակումը ավարտվել են 1.3.4 Կազմակերպվել են 6 հանրային խորհրդակցությունների միջոցառումներ 6 առաջնահերթ տարածքներում և իրականացվել են 10 հանրային փաստաթղթեր/համացանցի/մամուլի նյութեր/հրապարակումներ</p>	<p>մակերեսային մաքրում և հեռացում Կոտայքի պահեստավորման տարածք (150 տ ԺՊ-ների և մաքրման մնացորդների՝ 24 տարածքներից)</p>
		<p>1.3.2 Տարածքի հետագա մանրամասն գնահատում, մաքրման նախագծում, և վերահսկողության թույլտվության տրամադրում 6 առաջնահերթ տարածքների համար, որոնք բացահայտվել են ծրագրի նախապատրաստման դրամաշնորհի ընթացքում, սակայն էլնելով վերոնշյալ Աշխատանք 1.3.1-ի արդյունքներից</p> <p>1.3.3 Վեց առաջնահերթ տարածքներից մինչև 200 տ 2-րդ և 3-րդ կատեգորիաների աղտոտված հողի արտափորում, հեռացում, պարփակում և (կամ) վերականգնում</p> <p>1.3.4 Օժանդակություն հանրային խորհրդակցություններին 1.3.2-1.3.3 կետերում նշված մաքրման աշխատանքների նախագծման, թույլտվությունների տրամադրման, գործառնական փուլերի համար՝ 6 առաջնահերթ տարածքներում Կազմակերպվել են մոտ 6 ֆորմալ միջոցառումներ և պատրաստվել են 10 հանրային փաստաթղթեր /համացանցի/մամուլի նյութեր/հրապարակումներ</p>
<p>Արդյունք 2.1: Բոլոր էական առաջնահերթություններ կայացնող ԿՕՍ պետսիցիդների, հարակից խիստ բարձր կոնցենտրացիայի թափոնների և ԺՊ պաշարների հեռացում Հայաստանից</p>	<p>2.1.1 900 տ 1-ին կատեգորիայի ԿՕՍ պետսիցիդների, առաջնահերթ ԿՕՍ պետսիցիդների թափոնների և ԺՊ-ների արտահանում Կոտայքի օբյեկտից՝ որակավորված միջազգային օբյեկտում ոչնչացման նպատակով</p>	<p>2.1.1 900 տ 1-ին կատեգորիայի ԿՕՍ պետսիցիդների, առաջնահերթ ԿՕՍ պետսիցիդների թափոնների և ԺՊ-ների արտահանում Կոտայքի օբյեկտից՝ որակավորված միջազգային օբյեկտում ոչնչացման նպատակով</p>
<p>Արդյունք 2.2: ԿՕՍ պետսիցիդներով խիստ աղտոտված հողի</p>	<p>2.2.1 Վերականգնվել է ԿՕՍ պետսիցիդներով խիստ աղտոտված</p>	<p>2.2.1 7100 տ ԿՕՍ պետսիցիդներով աղտոտված 2-րդ կատեգորիայի հողի (7000 տ Նուբարաշենից</p>

Արդյունք	Ենթարդյունքներ	Աշխատանքի նկարագրություն
<p>բնապահպանորեն անվտանգ վերականգնման, այդ թվում՝ կորզված ԿՕԱ պետիցիդների ոչնչացման ցուցադրում</p>	<p>7100 տ հող (ԿՕԱ պետիցիդների թափոններ)՝ այնպիսի մակարդակների, որոնք ցածր են Նուբարաշենի տարածք վերադարձված և այնտեղ պարփակված հողում ԿՕԱ-ների ցածր պարունակությունից</p> <p>2.2.2 ԿՕԱ-երով աղտոտված հողի՝ երկրի ներսում վերականգնման առևտրային (կոմերցիոն) կենսունակության ցուցադրում</p> <p>2.2.3 20 տեղացի տեխնիկական աշխատակիցների գործառնական վերապատրաստում աղտոտված հողի վերականգնման ժամանակակից տեխնոլոգիաների հարցերով</p>	<p>և 100 տ 6 ԺՊ պահեստավորման տարածքներից) հողի բնապահպանորեն անվտանգ վերականգնում, այդ թվում՝ մնացորդային ԿՕԱ պետիցիդների աղտոտիչների հեռացում և ոչնչացում (մինչև <50 մաս միլիոնի մեջ) հողերի վերականգնման ընտրված օբյեկտներում, որոնք գործարկվում են Կոտայքի տարածքում, կամ որակավորված օբյեկտներում՝ մեկ այլ երկրում:</p>
<p>Արդյունք 3.1: Քիմիական թափոնների, այդ թվում՝ ԿՕԱ-ների, և աղտոտված տարածքների կառավարման իրավական/կանոնակարգող և տեխնիկական ուղղորդման գործիքամիջոցները թունաքիմիկատների անվտանգ կառավարման ներպետական շրջանակում հզորացվել են</p>	<p>3.1.1 Վտանգավոր քիմիական թափոնների և աղտոտված տարածքների կառավարման քաղաքականությունները, օրենսդրությունը և կարգավորող միջոցները վերանայվել են, թարմացվել, և կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>	<p>3.1.1 Վտանգավոր քիմիական թափոնների և աղտոտված տարածքների կառավարման վերաբերյալ քաղաքականությունների, օրենսդրության և ուղենիշների ռացիոնալացում, թարմացում և վերանայում</p>
	<p>3.1.2 Հաստատված տեխնիկական ուղեցույցներ վտանգավոր քիմիական թափոնների հավաքման, փոխադրման, պահեստավորման և ոչնչացման անվտանգ գործառնական ընթացակարգերի վերաբերյալ՝ համաձայն միջազգային գործելակերպերի, և վերապատրաստված 50 համապատասխան տեղացի աշխատակիցներ</p>	<p>3.1.2 Վտանգավոր քիմիական թափոնների հավաքման, փոխադրման, պահեստավորման և ոչնչացման անվտանգ գործառնական ընթացակարգերի վերաբերյալ տեխնիկական ուղեցույցների մշակում միջազգային գործելակերպերի համաձայն և դրանց ընդունում, այդ թվում տեղացի աշխատակիցների վերապատրաստում</p>
	<p>3.1.3 Ներմուծվել են միջազգային գործելակերպի համաձայն մշակված ուղեցուցային փաստաթղթեր բնապահպանական և առողջության ռիսկերի գնահատման մեթոդաբանությունների և գործելակերպերի վերաբերյալ, որոնք կիրառելի են վտանգավոր թափոնների պաշարների և աղտոտված տարածքների նկատմամբ, և վերապատրաստվել են 50 մասնագետներ</p>	<p>3.1.3 Բնապահպանական և առողջության ռիսկերի գնահատման մեթոդաբանությունների և գործելակերպերի ներմուծում, որոնք կիրառելի են վտանգավոր թափոնների պաշարների և աղտոտված տարածքների նկատմամբ և մշակված են համաձայն միջազգային գործելակերպի, այդ թվում՝ վերապատրաստման ծրագրեր: Մոտավորապես 18 ինստիտուցիոնալ, ուսումնական հաստատությունների, արդյունաբերության, մասնավոր ծառայություններ մատուցող կազմակերպությունների և ՀԿ-ների մասնագետներ վերապատրաստվել են</p>
<p>Արդյունք 3.2: Կատարողականի տեխնիկական/բնապահպանական գնահատում և ոչնչացման ներկա</p>	<p>3.2.1 Չեղարկվել են որակավորման tTest այրումներ «Էկոնախագիծ» կիզարանում՝</p>	<p>3.2.1 «Էկոնախագիծ» կիզարանի կատարողականի տեխնիկական և բնապահպանական գնահատում, ներառյալ միջազգային տիպային (սանդարտ)</p>

Արդյունք	Ենթարդյունքներ	Աշխատանքի նկարագրություն
ներպետական հնարավորություններին ներկայացվող պահանջների նորացում	հիմնվելով միջազգային չափորոշիչների վրա՝ որոշելու ՎԹ-ների համապատասխան հոսքերը կիզարանի կիրառության համար: 3.2.2 Տեխնիկական գնահատումը կատարվել է՝ որոշելով արդիականացման և ներդրումների պահանջները ընդլայնված կիրառության համար	փորձնական այրում բնորոշ թափոնների հոսքերի վրա և նախագծի գնահատում՝ արդիականացման անհրաժեշտ պահանջները որոշելու նպատակով
Արդյունք 3.3: Ներպետական հիմնական կարողությունները վտանգավոր թունաքիմիկատների արդյունավետ նմուշառման և բազմամիջավայր և աղտոտված տարածքների անալիզների համար առկա են, գործում են և արտոնագրված են համաձայն միջազգային չափորոշիչների	3.3.1 Ընդունված ներպետական ռազմավարություն ներպետական լաբորատորիաների հնարավորությունների ռացիոնալացման և վերազինման համար՝ սպասարկելու թունաքիմիկատների, այդ թվում՝ վտանգավոր թափոնների և աղտոտված տարածքների անվտանգ կառավարման շրջանակը 3.3.2 Երեք ներպետական լաբորատորիաներ, ներառյալ մեկական կարգավորող, գիտատնտեսական և մասնավոր հատվածներում, վերազինվել են վտանգավոր քիմիական թափոնների և աղտոտված տարածքների նմուշառման և անալիզների կատարման համապատասխան հնարավորություններով 3.3.3 Բրականացվել է արդիականացված վերապատրաստում 30 լաբորատոր անձնակազմի և առնչվող աշխատակիցների համար 3.3.4 Առկա են միջազգային արտոնագիր ստացած, միջազգային մեթոդներով ու գործելակերպերով աշխատող 3 լաբորատորիաներ	3.3.1 Լաբորատորիաների ռացիոնալացման և օպտիմալացման ազգային ռազմավարության մշակում
		3.3.2 Լաբորատոր ենթակառուցվածքների և սարքավորումների արդիականացում ըստ անհրաժեշտության՝ օպտիմալացնելու ազգային կարողությունները 3.3.3 Լաբորատոր անձնակազմի 3 վերապատրաստում տեղում, բազմամիջավայր նմուշառման, լաբորատոր անալիզների և ՈԱ/ՈՎ ընթացակարգերի հարցերով Կվերապատրաստվեն մոտավորապես 30 մասնագետ աշխատակիցներ 3.3.4 Օժանդակություն ընտրված լաբորատորիաների միջազգային արտոնագրմանը՝ համաձայն ռազմավարության: Կարտոնագրվեն (կներտիֆիկացվեն) 3 նախանշված ազգային լաբորատորիաներ

Միջազգային հղումներ/չափորոշիչներ/ուղեցույցներ վտանգավոր թափոնների պահեստավորման/փոխանցման օբյեկտների համար

1. **Բազելի տեխնիկական ուղեցույցներ:** Կայուն օրգանական աղտոտիչներից բաղկացած, դրանք պարունակող կամ դրանցով աղտոտված թափոնների՝ էկոլոգիապես անվտանգ կառավարման ընդհանուր տեխնիկական ցուցումներ, ՄԱԿ-ի Բնապահպանական Ծրագիր/CHW.12/5/Add.2/Rev.1, հուլիս, 2015 (ամենավերջին վերանայված տարբերակ),
<http://www.basel.int/Implementation/POPsWastes/TechnicalGuidelines/tabid/5052/Default.aspx>

Սա հիմնական ղեկավարող ուղեցույցն է, որն ընդունվել է սույն ծրագրին առնչվող՝ Ստոկհոլմի կոնվենցիայով՝ որպես 6-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների հիմք (Պաշարներից կամ թափոններից արտահոսքերի կրճատման կամ վերացման միջոցառումներ) (անգլերեն և ռուսերեն տարբերակների համացանցային հղումները՝

<http://chm.pops.int/TheConvention/Overview/TextoftheConvention/tabid/2232/Default.aspx>)

Բաժին IV: Բնապահպանորեն անվտանգ կառավարում

- Ա (A) բաժինը ընդգրկում է փաթեթավորում-փոխադրումը և պահեստավորումը:
 - Բ (B) բաժինը խթանում է վերոնշյալի ապահովումը կիրարկված ազգային կանոնակարգերով՝ ընդհանուր շրջանակում, որտեղ ընդգրկված են վտանգավոր թափոնների կառավարումը դրանց կյանքի ողջ շրջափուլի ընթացքում, վտանգավոր թափոնների ենթակառուցվածքների տեղակայման օրենսդրությունը:
 - Զ (F) բաժնում մանրամասնված են հղումների տիպային և գլխավոր սկզբունքները, որոնք կիրառելի են հավաքմանը, փաթեթավորմանը, պիտակավորմանը, փոխադրմանը, և պահեստավորմանը, ներառյալ մասնավորապես վտանգավոր թափոնների պահեստավորման կառույցների նախագծմանը և շահագործմանը վերաբերվող սկզբունքները (պարբ. 126-128):
 - Ժ (J) բաժնում ընդհանուր գծերով տրամադրված են արտակարգ իրավիճակներին արձագանքմանը ներկայացվող պահանջները, որոնք կարող են վերաբերել լինել (պարբ. 339-340):
 - ԺԱ (K) բաժնում տրված են ուղղորդումներ հանրության մասնակցության կիրառելի դրույթների վերաբերյալ (պարբ. 341-346):
2. **ՊԳԿ/FAO, 2009, «Ժամկետանց պեստիցիդների գործիքակազմ, բնապահպանական կառավարման գործիքակազմ», հատոր 2, Բաժին Դ. «Հավաքման կայանների ընտրությունը», Բաժին Ե. «Հավաքման կայանների կառավարումը».** <ftp://ftp.fao.org/docrep/fao/011/i0474e/i0474e.pdf>
ՊԳԿ-ի ժամկետանց պեստիցիդների ներկա գործիքակազմերի շարքերի փաստաթուղթ, որտեղ տրամադրված են հատակագծի նախագծման, ինչպես նաև պահեստավորման կառույցների շատագործման փաստացի ուղեցույցներ, ներառյալ դեպքերի ուսումնասիրության օրինակներ:
 3. **ՄԱԿ-ի Բնապահպանական Ծրագիր / UNEP, 1993: «Վտանգավոր նյութերի պահեստավորում: Վտանգավոր նյութերի անվտանգ պահեստավորման տեխնիկական ուղեցույց»:** Առկա է հետևյալ հասցեում. <http://www.unep.fr/shared/publications/pdf/WEBx0063xPASafeWarehousing.pdf>

Վտանգավոր թափոնների պահեստավորման կառույցի նախագծման և շահագործման հնառճ, սակայն օգտակար գործնական ուղեցույց է:

4. **ԳԷՀ-ի Գիտական և տեխնիկական հարցերով խորհրդատվական խումբ (STAP), 2011: «Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի համար կայուն օրգանական աղտոտիչների հեռացման տեխնոլոգիայի ընտրություն: «STAP-ի խորհրդատվական փաստաթուղթ»:** Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամ, 2011, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան https://www.thegef.org/gef/sites/thegef.org/files/publication/POPs_Disposal_Final_low.pdf

Ընդհանուր նախադրյալներ ապահով պահեստավորման համար՝ նախքան ոչնչացումը:

5. **«ԱՀԿՀ/IPPC Հղման փաստաթուղթ լավագույն հասանելի տեխնոլոգիաների վերաբերյալ՝ թափոնների կառավարման ինդուստրիաների համար», Եվրոպական Հանձնաժողով, 2006:** http://eippcb.jrc.ec.europa.eu/reference/BREF/wt_bref_0806.pdf

Ընդհանուր BREF փաստաթուղթը, որը ներառում է թափոնների կառավարման գործողությունների նկատմամբ կիրառելի ԼՀՏ-ները, այդ թվում՝ փոխանցման կայանների և պահեստավորման գործողությունների, ինչպես նաև վնասագերծման աշխատանքներ ներառող գործողությունների բոլոր կողմերը: Որոշակի հղման նյութեր կարելի է գտնել հետևյալ բաժիններում.

- Բաժին 1.1. Ընդհանուր տեղեկություններ թափոնների փոխանցման կայանքների համար (էջ 3),
- Բաժին 2.1.4. Պահեստավորման և փաթեթավորման-փոխադրման նկատմամբ կիրառվող ընդհանուր եղանակներ (էջ 36),
- Բաժին 4.1.4. ԼՀՏ-ները որոշելիս քննության առնվելիք եղանակներ. պահեստավորում և փաթեթավորում-փոխադրում (էջ 320-336):

6. **Վտանգավոր թափոնների պահեստավորման ազգային ուղղորդման փաստաթղթերի օրինակներ**

- Օնթարիոյի նահանգ (2007): «Քիմիական նյութերի և թափոնների պահեստավորման կառույցների բնապահպանական պաշտպանության ուղեցույցներ» <https://dr6j45jk9xcmk.cloudfront.net/documents/1759/196-chemical-and-waste-storage-facilities-en.pdf>
- Ալբերտայի նահանգ (1988): «Վտանգավոր թափոնների պահեստավորման ուղեցույցներ»: <http://environment.gov.ab.ca/info/library/7238.pdf>
- ԱՄՆ Շրջակա Միջավայրի Պահպանության Գործակալություն (ԱՄՆ ՇՄՊ) (2014). <https://www3.epa.gov/epawaste/hazard/tsd/permit/tsd-regs/tsdf-ref-doc.pdf>

Գործող ազգային նորմատիվային ակտեր

Խորհրդատուն նախագծային աշխատանքները պետք է իրականացնի ելնելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության ոլորտի գործող օրենսդրության, իրավական ակտերի, շինարարության նախագծման գործող համապատասխան նորմերի, ստանդարտների և տեխնիկական կանոնակարգերի պահանջներից:

Միաժամանակ նախագծման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է հաշվի առնել ստորև ներկայացված բնապահպանական և այլ իրավական ակտերը, չսահմանափակվելով թվարկածով:

	Իրավական ակտի անվանումը	Ընդունման ամսաթիվ-տարեթիվը / համարը
1.	Հայաստանի Հանրապետության օրենքը «Թափոնների մասին»	Նոյեմբերի 24, 2004 / թիվ 159-Ն
2.	ՀՀ կառավարության որոշում «Հայաստանի Հանրապետություն վտանգավոր և այլ թափոնների ներմուծումը, արտահանումը և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը կարգավորելու մասին»	Դեկտեմբերի 8, 1995/ թիվ 97
3.	ՀՀ կառավարության որոշում “Մի շարք բնապահպանական կոնվենցիաների շրջանակներում («Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիայի Գլուխ IX) ՀՀ պարտավորությունների կատարմանը ուղղված միջաջառումների ցանկի մասին ”	Նոյեմբեր 10, 2011/հ. 1594-Ն
4.	ՀՀ կառավարության որոշում «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության համար լիցենզավորման կարգը հաստատելու մասին»	Հունվարի 30, 2003 / թիվ 121-Ն
5.	ՀՀ Վարչապետի որոշում «Հայաստանի Հանրապետության «Թափոնների մասին» օրենքի իրականացումն ապահովելու միջոցառումների մասին»	Մայիսի 30, 2005 / թիվ 380-Ա
6.	ՀՀ կառավարության որոշում «Թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման կարգը հաստատելու մասին»	Դեկտեմբերի 9, 2005/ թիվ 2291-Ն
7.	«Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասագերծված տարաներ փոխադրելու մասին» ՀՀ օրենք	Փետրվարի 17, 2012/ թիվ 30-Ն
8.	ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2010 թիվ 01-Ն որոշում «ՀՀ առողջապահության նախարարի հրաման «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.7.003-10 սանիտարական կանոններ և նորմ»	Հունվարի 25, 2010 /01-Ն
9.	ՀՀ առողջապահության նախարարի 2009 թ. հոկտեմբերի 29 ի N N 20-Ն հրաման «Վտանգավոր քիմիական թափոնների գործածությանը և վտանգավոր քիմիական նյութերի պահպանմանը և փոխադրմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.7.001-09 սանիտարական կանոններ և նորմ	Հոկտեմբերի 29, 2009/20-Ն